

զի յն. ռՈՎՈՏԷՆ, եւ այն ժամանակ կոնաճեւ համարելի է: Սակայն իւր գոյութիւնն աւելի հին է. Թ ղարուն Ստեփանոս նահատակը «կոնն ի ոամկաց սովորական խօսից անուանէր», կ'ըսէ պատմութիւնը (Յհ. կթղ. 166). եւ արդեօք անօթիս նմանութեամբ տրուած մակղիր մը չէ՞ր այդ:

Խոհանոցին համար ալ կը գործածուէին՝ իբրեւ ջրոյ անօթներ՝ նաեւ կահոյրը, սափորն ու կոճը, զորս տեսանք մասնին մէջ (աստ, 25-7):

Հոս չենք կենար դիտելու համար կերակրները, որոնք զուցէ մեր այցելութեան պահուն դեռ չկան կամ անպատրաստ են: Զասոնք աւելի ուշով պիտի զննենք խրճտոյից ժամանակ կամ երբ սեղանի վրայ բերուին:



Գ. ՏԱՃԱՐ

1. — Վայրը: — Բնականապէս նախորդներէն աւելի ազնիւ եւ ուշագրաւ է ճաշավայրը. եւ նախ իւր անունն իսկ, որոյ ներքեւ ծածկուած է նոյն ինքն տեղւոյն նկարագիրը: Ծաշարան թէեւ հին, հա-